

**ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ
ՆԿՐՏՈՒՄՆԵՐԸ**

Եվ հակաթուրքական դաշինքի ձևավորման հեռանկարները^{*}

Բանալի բառեր – Թուրքիա, կերպափոխումներ, «պղպջակի էֆեկտ», Արևելյան Միջերկրածովք, Սիրիա, լիբիական քաղաքացիական պատերազմ, Հարավային Կովկաս, ներքաղաքական ճգնաժամ, արևելյան Հիտլերի գործառույթ, հակաթուրքական դաշինք:

Մուտք

Վերջին տարիներին Թուրքիան, փորձելով վերագտնել իրեն միջագային ասպարեզում, ռազմական, քաղաքական և տնտեսական լծակների օգտագործմամբ ընդլայնեց իր ազդեցությունը Միջերկրական ծովի ավազանում, Մերձավոր Արևելքում ու Հարավային Կովկասում: Սակայն նման համառ ու հետևողական ջանքերը հանգեցրին նրան, որ թուրքական առաջխաղացման ճանապարհին սկսեցին ուրվագծվել նորանոր խոչընդոտներ, որոնց կուտակումը ժամանակի ընթացքում կարող է հանգեցնել հակաթուրքական դաշինքի ձևավորմանը: Ներկա հրապարակման նպատակը օբյեկտիվ բնույթ ունեցող այս գործընթացի տեսանկյանից հեռանկարների համակողմանի ուսումնասիրությունն է՝ դրանից բխող հետևություններով:

**1. Թուրքիայի արտաքին քաղաքականության
կերպափոխումները**

Սառը պատերազմի ժամանակ Արևմուտքի և մասնավորապես ԱՄՆ-ի կողմից Թուրքիային վերապահվել էր հստակ դեր Արևմուտք-ԽՍՀՄ հակամարտությունում՝ հաշվի առնելով նրա սահմանակից լինելը ԽՍՀՄ-ին:

^{*} Հոդվածն ընդունվել է տպագրության 23.09.2021:

Երկրենե աշխարհակարգի փլուզումից հետո Թուրքիան բազմաթիվ այլ երկրների նման բախվեց նոր աշխարհակարգում իր դերը վերագտնելու խնդրին¹ հաշվի առնելով նաև սահմանակից երկրներում հակամարտությունների բռնկման և քաղաքական անկայունության փաստը: 1989–1992 թթ. Թուրքիայի առջև ծառայել էին մի շարք խնդիրներ՝ Բուլղարիայից էթնիկ թուրքերի ու իսլամացած բռնակների տեղահանումը, Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը, Իրաքի նախագահ Սադամ Հուսեյնի ներխուժումը Քուվեյթ, Պարսից ծոցի պատերազմից հետո մոտ կես միլիոն քրդերի վերաբնակեցումը Թուրքիային սահմանակից լեռնային տարածքներում, ինչը հումանիտար խնդիրներ առաջացրեց Թուրքիայի հետ սահմանին:

ԽՍՀՄ փլուզումից հետո Թուրքիային սահմանակից հարավկովկասյան 3 երկրները ներգրավվեցին արյունահեղ հակամարտություններում՝ ղարաբաղա-ադրբեջանական, վրաց-օսական ու վրաց-աբխազական, որոնք Թուրքիայի կողմից սկսեցին դիտարկվել որպես իր սահմաններն ապակայունացնող գործոններ: Անկարան ստիպված եղավ արագ արձագանքել սևծովյան, բալկանյան և կովկասյան տարածաշրջաններում, ինչպես նաև Կենտրոնական Ասիայում տեղի ունեցող իրադարձություններին, որտեղ Թուրքիան Արևմուտքի օգնությամբ փորձում էր կառավարման և կրթական համակարգերում ներդնել մուսուլմանական երկրի արևմտյան մոդելը: Բայց, ունենալով անկայուն տնտեսություն, լինելով քաղաքական անկայուն իրավիճակում և պատերազմի մեջ մտնելով քրդական ուժերի հետ, Թուրքիան սկսեց հարևանների և մասնավորապես Կենտրոնական Ասիայի երկրների հետ հարաբերություններում շեշտադրել պատմությունը, կրոնը և ընդհանրապես ավանդական կապերը: Դա փոխարինելու եկավ քենալիզմի տեսլականին՝ աշխարհիկ ու ազգային պետություն ունենալու և ազատական գաղափարախոսության հետևորդը լինելու սկզբունքներին:

Առաջին համաշխարհային պատերազմում պարտությունից հետո Քենալ Աթաթուրքը հիմք էր դրել նոր՝ աշխարհիկ և արևմտամետ ուղղվածություն ունեցող Թուրքիային: Դրա դրսևորումներից էին լատինական այբուբենի ներմուծումը, լիբերալ տնտեսական կառավարման ձևը, պետության աշխարհիկ բնույթը, ինչը փոխեց Թուրքիայի ավանդական արժեքները: Օգտվելով արևմտյան մոդելի պետություն ունենալու առավելություններից՝ Անկարան փորձում էր օգուտ քաղել նաև իր մյուս հարևանի՝ ԽՍՀՄ-ի հետ հարաբերություններից: Կոմունիզմի հաղթանակի վերաբերյալ հայտարարություններով նա համոզեց համաշխարհային հեղափոխության ցնորամիտ գա-

1 Տե՛ս Kemal Kirisci, The End of the Cold War and Changes in Turkish Foreign Policy Behavior, Foreign Policy Institute, November 29, 2016, <https://foreignpolicy.org/tr/the-end-of-the-cold-war-and-changes-in-turkish-foreign-policy-behaviour-kemal-kirisci> (մուսթ: 15.10.2021):

ղափարով տարված խորհրդային ղեկավարներին, որ ինքը նույնպես ցանկանում է գնալ կոմունիզմ կառուցելու ճանապարհով՝ ստեղծելով նույնիսկ իրեն ենթակա կեղծ կոմունիստական կուսակցություն, և դրա դիմաց ստացավ ռազմական մեծ օգնություն, որով վերականգնեց թուրքական բանակը: Սակայն, հասնելով իր նպատակին, Քեմալ Աթաթուրքը հայտարարեց, որ չի ցանկանում իր երկրում հաստատել կոմունիստական տնտեսական մոդելը, և շատ արագ դարձավ արևմտյան արժեքներ դավանող առաջնորդ:

Հետագայում՝ Երկրորդ աշխարհամարտից հետո, Արդահանի և Կարսի նկատմամբ պահանջներից և Խորհրդային Միության՝ Թուրքիա ներխուժելու սարսափից դրդված, Թուրքիան ավելի մերձեցավ Արևմուտքի, մասնավորապես՝ ԱՄՆ-ի հետ՝ դառնալով Եվրոպայի խորհրդի, այնուհետև՝ ՆԱՏՕ-ի անդամ: ՆԱՏՕ-ի, մասնավորապես ԱՄՆ-ի համար Թուրքիան ուներ կարևոր դեր² պայմանավորված իր աշխարհագրական դիրքով, քանի որ սահմանակից էր ԽՍՀՄ-ին, վերահսկում էր Դարդանեղի ու Բոսֆորի նեղուցները և այդ դաշինքում ուներ թվաքանակով երկրորդ բանակը: Իսկ Ֆրանսիան և Մեծ Բրիտանիան Թուրքիան դիտարկում էին որպես Մերձավոր Արևելքում կայունություն պահպանող ուժ³: Սակայն Արևմուտքում չէին ընկալում նրան որպես եվրոպական երկիր, իսկ ահա մահմեդական աշխարհը տարածաշրջանում Թուրքիային համարում էր արևմտյան երկրների շահերի սպասարկու: Կարիքյան ձգնաժամի ժամանակ այն փաստը, որ ԱՄՆ-ԽՍՀՄ գաղտնի բանակցությունների հետևանքով Կուբայում միջուկային գլխիկների հեռացումից հետո ԱՄՆ-ը դուրս բերեց Թուրքիայում գտնվող համանման սպառազինությունը, Թուրքիայի մոտ կասկած առաջացրեց ԱՄՆ-ի համար Անկարայի անվտանգության առաջնահերթություն լինելու վերաբերյալ: Սակայն այդ ժամանակ Թուրքիան այլընտրանք չուներ և համակերպվում էր իրավիճակին:

Սառը պատերազմից հետո Թուրքիան կորցրեց իր ավանդական տեղը արևմտյան աշխարհում: ՆԱՏՕ-ն զբաղված էր բալկանյան ձգնաժամի հաղթահարմամբ, իսկ Թուրքիան մղվել էր լուսանցք՝ կանգնելով իր նոր աշխարհաքաղաքական դերը վերագտնելու խնդրի առաջ: Նոր պայմաններում Թուրքիան ամեն կերպ փորձում էր պահպանել իր կարևորությունը ԱՄՆ-ի համար՝ միանալով Իրաքի դեմ էմբարգոյին, բացելով Ինջիրլիկի բազան և նույնիսկ Իրանին համոզելով անուղղակիորեն աջակցություն ցույց տալ ԱՄՆ-ին Հուսեյնի դեմ պայքարում: Այսպիսով՝ ԽՍՀՄ-ի դեմ բուֆերային գոտուց Թուրքիան վերածվեց Մերձավոր Արևելքից եկող

2 Տե՛ս **Senem Ustun**, Turkey and the Mrashall Plan: Strive for Aid, Ankara, Yearbook University of Ankara, 1997, էջ 31-52:
3 Տե՛ս **Hale William**, Turkish Foreign Policy 1774-2000, London: Routledge, 2012, էջ 56-78:

վտանգները զսպող գործոնի, ուստի 1991 թ. ԱՄՆ նախագահ Զ. Բուշի այցը Թուրքիա կրկին ընդգծեց Անկարայի կարևորությունը ԱՄՆ-ի համար:

1990-ականներից սկսած՝ Թուրքիայում սկսեցին վերածնվել իսլամիզմի և պանթյուրքիզմի գաղափարները, ինչի արդյունքը եղավ ընտրությունների ժամանակ իսլամիստների հաղթանակը Ստամբուլում և Անկարայում: Իսլամիզմի վերելքին, կարելի է ասել, նպաստեցին Բալկաններում բոսնիացի մուսուլմանների ջարդերը⁴, իսկ ահա քրդական հարցի արծարծումն ուժեղացրեց ազգայնականների դիրքերը Թուրքիայի ներսում: Հատկանշական է, որ այդ գաղափարներն առավել տարածված էին տնտեսապես ավելի թույլ զարգացած և աղքատության բարձր մակարդակ ունեցող շրջաններում:

Թուրքիայի մյուս կարևոր խնդիրը Կենտրոնական Ասիայում իր դերի բարձրացումն էր՝ էթնիկ պատկանելության հարցի շահարկմամբ, տնտեսական, սոցիալական և մշակութային կապերի խորացմամբ: Նման քայլերով Թուրքիան փորձում էր նվազեցնել իր կախվածությունը Ռուսաստանի էներգակիրներից և աշխարհաքաղաքական առումով մրցել Իրանի և Ռուսաստանի հետ: Սակայն Թուրքիան հաշվի չէր առել Ռուսաստանի մեծ ազդեցությունը նախկին սոցճամբարի երկրների վրա, ուստի և 1990-ական թթ. չկարողացավ փոխել ուժերի հարաբերակցությունը տարածաշրջանում:

Քաղաքական նոր իրողությունների պայմաններում Թուրքիայի նախագահ Օզալը 1992 թ. Փարիզում իր ելույթում նշեց, որ Թուրքիան կարող է դառնալ կամուրջ Արևմուտքի և Արևելքի միջև: Քլինթոնի վարչակազմը նույնպես համամիտ էր այդ տեսակետին, սակայն իսլամիզմի վերելքի և քրդական հարցի թեժացման պայմաններում Թուրքիան սկսեց դիտարկվել որպես անկայուն գործընկեր:

1992 թ. Լիսաբոնի գագաթնաժողովում ԵՄ-ն նշեց, որ անհրաժեշտ է խորացնել հարաբերությունները Թուրքիայի հետ: ԱՄՆ-ն համոզում էր եվրոպական երկրներին ընդունել Թուրքիային ԵՄ, սակայն Եվրոպայում Թուրքիայի վերաբերյալ կար երկու հակադիր տեսակետ. մինչ Անգլիան և Իտալիան հանդես էին գալիս Թուրքիայի՝ ԵՄ անդամակցության օգտին, Ֆրանսիան, Հունաստանը, Դանիան և Գերմանիան դեմ էին արտահայտվում դրան: 1990-ական թթ. Թուրքիան փորձեց տնտեսական բարեփոխումներ իրականացնել, սակայն նույնը տեղի չունեցավ քաղաքական և մարդու իրավունքների ոլորտներում: Շրջադարձային եղավ 2002 թվականը, երբ ընտրություններում հաղթեց Թուրքիայի ներկայիս նախագահ Ռ. Էրդողանի «Արդարություն և զարգացում» իսլամական պահպանողական կուսակցությունը: Էրդողանի իշխանության տարիներին Թուրքիան

4 Stü Aras in Feroz Ahmad, The Making of Modern Turkey, London: Routledge, 1993, էջ 181-213:

արևմտյան աշխարհիկ արժեքներ դավանող երկրից սկսեց վերածվել չափավոր իսլամական պետության, որը փորձում էր դառնալ իսլամական աշխարհի ղեկավարը և բոլոր մահմեդականների առաջնորդն ու պաշտպանը: 2001 թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունից հետո արևմտյան երկրների և մահմեդական աշխարհի միջև անջրպետն ավելի խորացավ, ուստիև Թուրքիան, լինելով ԵՄ անդամության թեկնածու և ՆԱՏՕ-ի անդամ երկիր, էլ ավելի հեռացավ արևմտյան արժեքներից՝ հայացքն ուղղելով դեպի արևելք:

Ավանդաբար Թուրքիան ռազմական սերտ գործակցության մեջ էր ԱՄՆ-ի հետ, եվրոպական երկրների հետ համագործակցում էր տնտեսական ներդրումների և բարեփոխումների հարցով, իսկ Ռուսաստանից ու Իրանից էներգակիրներ էր ներմուծում: Սակայն, փորձելով վարել ավելի անկախ արտաքին քաղաքականություն, Էրդողանը խնդիրներ ստեղծեց Լեռնային Ղարաբաղում, Սիրիայում, Լիբիայում և Միջերկրական ծովում ընթացող և հնարավոր հակամարտությունների առնչությամբ: Վերջին տարիներին Թուրքիան իբրև թե խորացնում է հարաբերությունները Ռուսաստանի հետ: Սակայն, նրանց այսպես կոչված, ստրատեգիական գործակցությունն առավել նման է շագրենի կաշվի նման ձգվող փոխադարձ անվստահության և հակասությունների երկար շղթայի՝ Ղրիմի հարցից մինչև ԼՂ-ում ռուս խաղաղապահների ներկայությունը: Իսկ ահա Սիրիայում և Լիբիայում ազդեցության համար ռուսների դեմ պայքար մղելը ցույց է տալիս, որ այդ համագործակցությունն ավելի շատ իրավիճակային է, այլ ոչ թե ռազմավարական: Բացի այդ՝ երկու կողմերն էլ կասկածում են միմյանց Արևմուտքի հետ սեպարատ գործակցության գնալու հարցում:

Թրամփի իշխանության օրոք Ռուսաստանը և Թուրքիան քարտ բլանշ էին ստացել ԱՄՆ-ից, որ Վաշինգտոնը չի միջամտի Անկարայի և Մոսկվայի ազդեցության գոտիների բաժանման գործընթացին: Սակայն, Զ. Բայդենի՝ իշխանության գալով, նման ծրագիրը ոչ միայն հօդս ցնդեց, այլև վտանգ առաջացավ, որ այդ երկրներն Ադրբեջանի հետ միասին կհայտնվեն միջազգային մեկուսացման մեջ՝ հաշվի առնելով նրանց կողմից մի շարք տարածաշրջաններում, այդ թվում՝ Հարավային Կովկասում միջազգային իրավունքի կոպիտ ռոտահարումները: Դրա հետևանքով է, որ Ռուսաստանը, չնայած ԵԱՀԿ Մինսկի խմբի ձևաչափը պայթեցնելու իր սկզբնական ցանկությանը, այժմ արտահայտվում է այդ ձևաչափը վերականգնելու օգտին, իսկ Թուրքիան ամեն կերպ հավաստիացնում է ԱՄՆ-ին, որ ինքը ՆԱՏՕ-ի առանցքային անդամն է և Միացյալ Նահանգների ամենամեծ դաշնակիցը: Եթե Թուրքիային ձեռնառու լինեին ՆԱՏՕ-ից դուրս գալը և, օրինակ, ՀԱՊԿ-ին անդամակցելը, Անկարան դա վաղուց կաներ: Սակայն նույնիսկ Էրդողանը քաջ գիտակցում է, թե սպառազինության հարցում ինչ առավելություններ է ձեռք բերել ՆԱՏՕ-

ի անդամ լինելուց, որոնց շնորհիվ Ղարաբաղյան երկրորդ պատերազմում փաստացի ջախջախեց ռուսական զենքերը: Բացի այդ՝ թուրքական բանակի ղեկավարության զգալի հատվածն իր ռազմական կրթությունը ստացել է ՆԱՏՕ-ում և դժվար թե ցանկություն ունենա դառնալու ինչ-որ անհասկանալի կառույցի՝ ՀԱՊԿ-ի անդամ: ՆԱՏՕ-ից դուրս գալով՝ Թուրքիան կկորցնի իր կարևոր դերը Ռուսաստանի համար, չի կարողանա խաղալ երկու գերտերությունների հակասությունների վրա և հավասար գործընկերոջից կվերածվի տարածաշրջանում Ռուսաստանի կցորդի: Ինչ վերաբերում է տնտեսությանը, ապա Թուրքիան արդեն իր մաշկի վրա լավ զգում է քաղաքական կողմնորոշման փոփոխության տնտեսական ծանր հետևանքները և ամենևին էլ ցանկություն չունի ԵՄ-ից ստացվող միլիարդավոր դոլարները փոխարինելու, օրինակ, ԵՏՄ-ին անդամակցությամբ: Տեղին է թերևս հիշել ամերիկացի քաղաքագետների տեսակետը, որ դուլարային համակարգից թուրքական բանկերին կտրելը աղետալի հետևանքներ կունենա Թուրքիայի համար⁵:

Այսօր Թուրքիան մի շարք տարածաշրջաններում ստեղծել է անկայունության օջախներ և աշխարհաքաղաքական պայքար է մղում իր հետ միևնույն ռազմական դաշինքում ընդգրկված երկրների դեմ: Կարելի է առանձնացնել այդ պայքարի երեք հիմնական ուղղություն՝ Միջերկրական ծով, Մերձավոր Արևելք և Հարավային Կովկաս: Ընդ որում պետք է նշել, որ այդ խնդիրները փոխկապակցված են: Դրա մասին են վկայում, օրինակ, Ֆրանսիայի ակտիվությունը ԼՂ-ի և Լիբիայի հարցերում, Հունաստանի արտաքին գործերի նախարարի այցը Հայաստան Ղարաբաղյան երկրորդ պատերազմի ժամանակ և աջակցություն հայտնելը՝ ընդդեմ թուրքական ագրեսիայի, Սիրիայի նախագահ Ասադի հայտարարությունը Ղարաբաղում սիրիացի վարձկանների ներկայության մասին, ԱՄԷ-ի և Սաուդյան Արաբիայի ղեկավարների հակաթուրքական ելույթներն ու Թուրքիայի հանդեպ էմբարգոյի կիրառումը, և Հայաստանում ներդրումներ անելու ծրագրերը, և հակամարտությունների գրեթե միաժամանակյա բռնկումը Միջերկրական ծովի ավազանում, Լեռնային Ղարաբաղում և Պաղեստինում:

2. Թուրքիայի ակտիվացումը Արևելյան Միջերկրածովքում

Կիպրոս ներխուժելուց և նրա հյուսիսային հատվածը միջազգային իրավունքի բոլոր նորմերի խախտումով օկուպացնելուց ի վեր Թուրքիան ամեն կերպ խոչընդոտում է Կիպրոսի վերամիավորմանը: Վերջին ընտ-

5 Տե՛ս Ewing, Tariffs Wont Stop Turkey's Invasion of Syria, Analysts War, The New York Times, 2019, <https://www.nytimes.com/2019/10/15/business/steel-tariffs-turkey.html> (մուտք՝ 15.10.2021):

րություններում Կիպրոսի թուրքական մասում Էրդողանի սատելիտ նախագահի թեկնածուի հաղթանակից հետո վերամիավորման հույսերը կրկին հողս ցնդեցին: Միջազգային հանրությունը չի ձանաչում Հյուսիսային Կիպրոսը, իսկ Թուրքիան չի ընդունում Միջերկրական ծովում բացառիկ տնտեսական գոտի ունենալու՝ Կիպրոսի Հանրապետությանը պատկանող իրավունքները և պահանջում է ձանաչել նաև Հյուսիսային Կիպրոսի՝ բացառիկ տնտեսական գոտու իրավունքները: Թուրքիան վիճարկում է նաև Էգեյան և Միջերկրական ծովերում հունական որոշ կղզիների, օդային տարածքի և մայրցամաքային շելֆի պատկանելությունը: Լարումն իր գազաթնակետին հասավ 2019–2020 թթ., երբ Թուրքիան Լիբիայի՝ ՄԱԿ-ի կողմից ձանաչված կառավարության հետ պայմանագիր կնքեց ծովային սահմանների վերաբերյալ, որին ի պատասխան՝ Հունաստանը և Եգիպտոսը կնքեցին թուրքլիբիական պայմանագրի դեմ ուղղված համաձայնագիր: Բացի այդ՝ Իսրայելի, Հունաստանի և Կիպրոսի միջև կնքվեց համաձայնագիր, որի նպատակն էր իրականացնել գազի արտահանումը դեպի Եվրոպա Թուրքիան շրջանցող ձանապարհով: Խնդիրն ավելի սրվեց, երբ Թուրքիան հորատման նպատակով մոտեցրեց իր նավերը Հունաստանի սահմաններին, որից հետո Ֆրանսիան, Իտալիան, Հունաստանը և Կիպրոսը սկսեցին համատեղ գորավարժություններ⁶, ԱՄՆ-ն և ԵՄ-ն հանդես եկան Անկարային դատապարտող հայտարարություններով և որոշ անհատական սանկցիաներ կիրառեցին Թուրքիայի պաշտոնյաների նկատմամբ: Իսկ Գերմանիան, որը կողմնակից էր Թուրքիայի հետ խնդիրները բանակցությունների ձանապարհով լուծելուն, այդ ժամանակ փրկեց Թուրքիային լայնամասշտաբ սանկցիաների կիրառումից:

Սակայն նոր ընտրությունների անցկացումով և կանցլեր Մերկելի հեռանալով Թուրքիան կարող է կորցնել Եվրոպայում իր ամենամեծ պաշտպանին: Կողմերի միջև հակամարտությունն ավելի թեժացավ, երբ Միջերկրական ծովում հայտնաբերվեցին բնական գազի նոր հանքավայրեր, և Կիպրոսը որոշեց դրանց շահագործման իրավունքը տալ ԱՄՆ-ի, Իտալիայի, Ֆրանսիայի և Քաթարի նավթային ընկերություններին: Այդ գործընթացը կասեցվեց մինչև 2021 թ. կեսերը, սակայն Միջերկրական ծովում ցանկացած գործողություն կարող է նոր բախումների պատճառ դառնալ: Թուրքիան, խախտելով ձեռք բերված համաձայնությունը, հորատման պատճառաբանությամբ պարբերաբար մոտեցնում է իր նավերը Հունաստանի սահմաններին, ինչը խիստ արձագանքի է արժանանում մի շարք երկրների, այդ թվում՝ ԱՄՆ-ի կողմից: Ի պատասխան դրա՝ 2021 թ. սեպ-

6 Տե՛ս **Erlanger Steven**, Tensions Over Drilling Between Turkey and Greece Divide EU Leaders, “New York Times”, August 28, 2020, <https://www.nytimes.com/2020/08/27/world/europe/greece-turkey-eu.html> (մուտք՝ 11.10.2021):

տեմբերի 28-ին Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնն ու Հունաստանի վարչապետ Կիրիակոս Միցոտակիսը Փարիզի Ելիսեյան պալատում հանդես եկան արդիական սպառազինության ձեռքբերման ու փոխադարձ պաշտպանության համաձայնագրի ստորագրման մասին համատեղ հայտարարությամբ: Ֆրանսիայի նախագահ Է. Մակրոնը պայմանագրի ստորագրումը բնութագրել է որպես վերջին 18 ամիսների բուռն համագործակցության գագաթնակետ, իսկ Հունաստանի վարչապետը պայմանագրի ստորագրման օրն անվանել է պատմական օր Հունաստանի և Ֆրանսիայի համար: Հունաստանի կառավարության ղեկավարը նշել է, որ, ավելի վաղ հայտարարված ֆրանսիական արտադրության «24 Rafale» կործանիչներից բացի, Հունաստանն իր ռազմածովային ուժերի համար 3 նոր ֆրեգատ է գնել Ֆրանսիայից և պայմանավորվածություն ձեռք բերել ևս 1-ի վերաբերյալ:

Թուրքիայի դիվանագիտական գերատեսչության ներկայացուցիչը, մեկնաբանելով ֆրանս-հունական գործարքը, հայտարարել է, թե Աթենքի ջանքերն էլ ավելի վճռական են դարձնում Անկարային Էգեյան և Միջերկրական ծովերում իր իրավունքները պաշտպանելու հարցում: Ըստ թուրք դիվանագետի՝ ծովային և օդային սահմանների հարցով Հունաստանի առավելապաշտությունը հակասում է միջազգային իրավունքի նորմերին: Թուրքիայի դիվանագիտական գերատեսչության ներկայացուցչի պնդմամբ՝ Հունաստանը Թուրքիայի նկատմամբ թշնամական քաղաքականություն է վարում՝ սպառազինությունների մրցավազք սկսելով և փորձելով մեկուսացնել Անկարային:

Թուրքիան փաստացի իրեն ծուղակի մեջ է գցել՝ Միջերկրական ծովում խնդիրներ ստեղծելով Ֆրանսիայի, Իտալիայի, Եգիպտոսի, Իսրայելի, Հունաստանի, Կիպրոսի ու նաև ԱՄՆ-ի հետ, ինչի վկայությունն է ԱՄՆ-ի կողմից «F-35» կործանիչների վաճառքը Հունաստանին: Անշուշտ, էներգակիրների գների ժամանակավոր իջեցումը հանգեցրեց նաև հունա-իսրայելական էներգետիկ նախագծի դերի նվազմանը, բայց շուտով՝ գների վերստին բարձրացման պայմաններում, միջերկրածովյան տարածաշրջանում լարվածությունը շարունակեց աճել: Դրա վերջին վկայություններն են ամերիկյան զորքերի կուտակումները Հունաստանը Թուրքիայից բաժանող Ալեքսանդրոպոլիսի հատվածում, Հունաստանի ու Ֆրանսիայի միջև ռազմական օգնության մասին համաձայնագրի ստորագրումը, որում շեշտվում է տվյալ փաստաթղթի դրույթները ՆԱՏՕ-ի անդամ երկրի հանդեպ ևս գործադրելու հնարավորությունը, և վերջապես՝ Հունաստան-Կիպրոս-Եգիպտոս եռակողմ ձևաչափի՝ վերջին շրջանի ակտիվացումը, ինչը պայմանավորված է Թուրքիայի ղեկավարության հերթական հոխորտանքներին դիմակայելու անհրաժեշտությամբ:

3. Թուրքիայի դերը սիրիական և լիբիական քաղաքացիական պատերազմներում

Մերձավոր Արևելքում Սաուդյան Արաբիան, ԱՄԷ-ն և Եգիպտոսը ավանդաբար կասկածանքով են վերաբերվում Թուրքիային: Իր հերթին Թուրքիան սերտ հարաբերություններ է պահպանում Քաթարի հետ, որտեղ տեղակայված իր ռազմաբազայի միջոցով իրականացնում է ռազմական օպերացիաներ, բացի այդ՝ փորձում է կայունացնել իր տնտեսական վիճակը Քաթարից և Չինաստանից եկող ֆինանսական հոսքերով: Սաուդյան Արաբիայի, ԱՄԷ-ի և Եգիպտոսի հետ Թուրքիայի հակասությունները պայմանավորված են նաև Սոմալիում Թուրքիայի ռազմաբազայի առկայությամբ, Լիբիայում տարբեր կողմերի պաշտպանությամբ և Սիրիայում Թուրքիայի ազդեցության ուժեղացմամբ: Լիբիայում Թուրքիան, Իտալիան, Գերմանիան և Քաթարը ԱՄՆ-ի հետ միասին պաշտպանում էին ՄԱԿ-ի կողմից ձանաչված՝ Լիբիայի ազգային համաձայնության կառավարությանը, իսկ Ռուսաստանը, Ֆրանսիան, Եգիպտոսը և ԱՄԷ-ն՝ լիբիական ազգային բանակի ղեկավար Հաֆթարի ուժերին: Ֆրանսիայի կողմից Լիբիայի նկատմամբ էմբարգոյի կիրառումը հնարավորություն տվեց Ֆրանսիային և իր դաշնակիցներին սահմանափակելու Թուրքիայի օգնությունը Լիբիայի կառավարությանը՝ միևնույն ժամանակ ապահովելով օդային օգնություն Հաֆթարին, ինչն արժանացավ Թուրքիայի կոշտ արձագանքին: Թուրքիան, զգալով Հաֆթարի առաջխաղացման վտանգը, 2020 թ. հունիսի 5-ին ռազմական ուժեր, ինչպես նաև սիրիացի վարձկաններ ուղարկեց Լիբիա՝ Տրիպոլի վերագրավելու համար, և, մեծ կորուստներ կրելով, հետ բերեց այն, սակայն երկիրը փաստացի շարունակում է բաժանված մնալ երկու հակամարտող ուժերի միջև: Սուննի արաբական երկրները նույնիսկ էմբարգո կիրառեցին թուրքական ապրանքների նկատմամբ և այժմ խթանում են նաև Հյուսիսային Աֆրիկայի երկրների հրաժարումը թուրքական ապրանքներից: Թուրքիան այս երկրների հետ հարաբերությունները բալանսավորելու համար ավանդաբար սերտորեն համագործակցում էր Իսրայելի հետ, սակայն Էրդողանի իշխանության օրոք երկու երկրների միջև հարաբերություններն էապես վատացան, և դրա փոխարեն սկսվեց Իսրայելի հաշտեցումը ԱՄԷ-ի և Սաուդյան Արաբիայի հետ: Լիբիայում Ֆրանսիան, ԱՄԷ-ն, Իտալիան և Եգիպտոսը ունեն մի քանի կարևոր շահեր, որոնք նաև սերտորեն կապված են Միջերկրական ծովի խնդիրների հետ. տնտեսական հետաքրքրություններ, իսլամիզմի, ահաբեկչության և միգրացիայի դեմ պայքար: Թուրքիան նույնպես այստեղ ունի իր շահերը՝ էներգակիրներ, կոմերցիոն օգուտներ, ինչպես նաև Լիբիայից և Սիրիայից

փախստականների հոսքը կասեցնելու նպատակ: Թուրքիան ձգտում է նաև օգտագործելու Լիբիայի տարածքը որպես պլացդարմ՝ Սիրիայում օպերացիաների համար: Թուրքիան 2020 թ. օգոստոսին նաև համաձայնագիր կնքեց Լիբիայի հետ՝ փորձելով մեկուսացնել Կիպրոսը, ինչը հանգեցրեց Հունաստանի և Եգիպտոսի միջև համաձայնագրի կնքմանը, որով նախատեսվում է թուրքական ջրերի շրջափակում: Դրանից հետո՝ 2020 թ. օգոստոսին, Ֆրանսիան, Իտալիան և Հունաստանը համատեղ գորավարժություններ սկսեցին, իսկ ԱՄԷ-ն նույն ժամանակահատվածում նոր գորքեր ուղարկեց Կրետեում գտնվող հունական ռազմաբազա: ԱՄՆ-ն սկզբում Թուրքիայի հետ Լիբիայում իր գործակցությունը դիտում էր որպես Ռուսաստանին հակակշռելու փորձ: Սակայն ներկայումս ԱՄՆ-ն չի ցանկանում դառնալ տարածաշրջանում Թուրքիայի նկրտումների աջակիցը: Այժմ Սիրիայում ԱՄՆ-ն և Թուրքիան աջակցում են տարբեր ուժերի: Թուրքիան պաշտպանում է Սիրիայի ազատ բանակին, իսկ ԱՄՆ-ն՝ Սիրիայի դեմոկրատական ուժերին, որոնց թվում են նաև քրդական միավորումները, որոնց Անկարան որակում է որպես ահաբեկիչներ: Բացի այդ՝ ԱՄՆ-ն ոգևորված չէ նաև Թուրքիայի՝ Լիբիայի կառավարությանը Եվրոպայի իր դաշնակիցների դեմ օգտագործելու փաստով:

Թուրքիայի համար առանձին խնդիր է սիրիական հակամարտությունը: ԱՄՆ-ի գորքերի հեռացումից հետո Թուրքիան, Իրանը և Ռուսաստանը, Աստանայի պայմանագրով, Սիրիայում փաստացի բաժանեցին ազդեցության գոտիները, չնայած հետագայում Իրանը դուրս մղվեց այդ գործընթացից: Այժմ ևս Թուրքիան և Ռուսաստանը, չնայած առերևույթ սերտ հարաբերություններին, շարունակում են Սիրիայում պաշտպանել երկու հակադիր կողմերի: Թուրքիան՝ սիրիական ընդդիմությանը, իսկ Ռուսաստանը՝ կառավարական ուժերին ու Բաշար Ասադին, որի հրաժարականն է պահանջում Թուրքիան: Իդիլը դարձավ դեէսկալացիայի գոտի, սակայն Թուրքիան հետագայում գրավեց այլ գոտիներ ևս՝ Սիրիայից փախստականների հոսքը կասեցնելու պատրվակով: Անկարան հնոտորեն օգտագործում է նաև Սիրիայից և Լիբիայից եկող փախստականների խնդիրը՝ Եվրոպային շանտաժի ենթարկելու համար: Օրինակ՝ թուրք-հունական լարվածության ժամանակ Թուրքիան հայտարարեց, որ եթե Եվրոպան պատժամիջոցներ սահմանի իր նկատմամբ, ինքը կբացի սահմանները փախստականների առաջ: Ավելին՝ նա նման փորձնական քայլ արեց 2020 թվականին՝ փախստականների մի փոքր խումբ ուղարկելով Էգեյան ծովով դեպի Հունաստան: Սակայն Թուրքիային նույնպես ձեռնտու է պահպանել ԵՄ-ի հետ միգրացիոն համաձայնագիրը, քանի որ համավարակի պայմաններում 7-8 մլրդ դոլարի հոսքը փրկում է թուրքական՝ առանց այն էլ թուլացած տնտեսությունը և օգնում է որոշ չափով լուծելու 3,5 միլիոն

սիրիացիների խնդիրները, որոնց Թուրքիան նպատակ ունի հետագայում վերաբնակեցնելու Սիրիայում ստեղծված բուֆերային գոտիներում: Թուրքիայի համար կարևոր է նաև թույլ չտալ քրդական ինքնավար միավորի ստեղծումը իր սիրիական սահմանների մոտ, և այդ պատճառով Անկարան, հակադրվելով նաև ԱՄՆ-ին, ռմբակոծում է քրդերի դիրքերը Սիրիայում՝ ներկայացնելով նրանց որպես ահաբեկիչներ⁷:

4. Թուրքիայի ներխուժումը Հարավային Կովկաս

Թուրքիայի աճող աշխարհաքաղաքական նկրտումներից անմասն չմնաց նաև Հարավային Կովկասը, ուր Թուրքիան միշտ էլ պաշտպանել է Ադրբեջանի շահերը: Բայց Ղարաբաղյան առաջին պատերազմի ժամանակ նա նույնիսկ չփակեց իր օդային սահմանը ՀՀ-ի հետ, ինչը Հայաստանին հնարավորություն տվեց խուսափելու հումանիտար աղետից: Ղարաբաղյան երկրորդ պատերազմի ժամանակ թուրքական հրամանատարական կազմը փաստացի ղեկավարում էր Ադրբեջանի գործողությունները և օգտագործում ՆԱՏՕ-ի զինանոցը: Պատերազմից հետո Թուրքիան ռուսական զորքերի հետ Լեռնային Ղարաբաղում ստեղծեց մոնիթորինգային կենտրոն և կարողացավ ավանդաբար ռուսական ազդեցության գոտի համարվող Հարավային Կովկասում մեծացնել իր քաղաքական ու ռազմական ներկայությունը: Ավելին՝ Թուրքիան փորձում է ներգրավվել ԵԱՀԿ Մինսկի խմբում՝ այդ մասին բարձրաձայնելով Ադրբեջանի, Երբեմն՝ նաև Ռուսաստանի շուրթերով: Սակայն, երբ դա հավանության չարժանացավ արևմտյան համանախագահների կողմից, Թուրքիան սկսեց խոսել Ռուսաստանի հետ իր ձևաչափը ստեղծելու մասին: Զ. Բայդենի ընտրվելուց և 2021 թ. ապրիլի 24-ին ԱՄՆ-ի կողմից Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչումից հետո Թուրքիան ազդակ ստացավ, որ պետք է հեռու մնա Ղարաբաղյան հակամարտությունում ակտիվ դերից: Չնայած դրանից հետո էլ Թուրքիան Երբեմն հանդես է գալիս Ղարաբաղյան հակամարտության վերաբերյալ նոր հայտարարություններով, սակայն որոշակի զգուշավորություն է դրսևորում այդ հարցում: Դրա վերջին վկայությունը Հարավային Կովկասում «3+3» ձևաչափի ստեղծման Թուրքիայի հավակնությունն է, որն իրականում Ռուսաստանի հետ միասին տարածաշրջանում արևմտյան ազդեցությունը չեզոքացնելու փորձ է:

7 **Stu Cagaptay Soner**, US Safe Zone Deal Can Help Turkey Come To Terms with the PKK and YPG, Washington Institute for Near East Policy, August 7, 2019, <https://www.washingtoninstitute.org/policy-analysis/us-safe-zone-deal-can-help-turkey-come-terms-pkk-and-ypg> (մուտք՝ 11.11. 2021):

Ինչ վերաբերում է վրաց-աբխազական և վրաց-օսական հակամարտություններին, ապա Թուրքիան զգուշանում է Ռուսաստանին ձեռնոց նետելուց, սակայն դրանք Վրաստանի տարածքային ամբողջականության շրջանակներում լուծելու վերաբերյալ Անկարայի դիրքորոշումը հայտնի է բոլորին: Բացի այդ՝ Թուրքիան լայնորեն տարածում է իր ազդեցությունը իրեն սահմանակից վրացական շրջաններում, մասնավորապես՝ Աջարիայում: Վրաստանում արդեն զգում են Թուրքիայի ազդեցության աճի միտումը և դրանից բխող աշխարհաքաղաքական վտանգները: Վրաստանի համար մտահոգիչ է նաև այն փաստը, որ Ռուսաստանը և Թուրքիան հարավկովկասյան տարածաշրջանում փորձում են միմյանց միջև բաժանել ազդեցության գոտիները: Ուստի, հաշվի առնելով Ռուսաստանից եկող վտանգը, Վրաստանը փաստացի մնում է միայնակ այս երկու հավակնոտ տերությունների միջև: Վրաստանը հրաժարվել է «3+3» ձևաչափի ստեղծման ռուս-թուրքական առաջարկից, որը նախատեսում է տարածաշրջանի կոմունիկացիաների բացում, և հանդես է գալիս անդրկովկասյան խնդիրները երեք երկրների համատեղ ջանքերով լուծելու օգտին: Մինևույն ժամանակ Վրաստանը կտրականապես հրաժարվում է Աբխազիայով անցնող կոմունիկացիաները բացելուց՝ հայտարարելով, որ Մոսկվան մտադիր է Աբխազիան կցել Ռուսաստան-Բելառուս միութենական պետությանը: Վրաստանը փորձում է բարելավել հարաբերությունները Աբխազիայի հետ. պարզեցված համակարգով անձնագրեր և քաղաքացիություն է տալիս, վարկեր է տրամադրում արտոնյալ տոկոսադրույքով: Թերևս նա գիտակցում է, որ Ռուսաստանի հետ տարածաշրջանային պայքարում պետք է հենվի փափուկ ուժի վրա, որպեսզի ուղիղ հակադրության հետևանքով կրկին տարածքային կորուստներ չունենա: Ուստի ռուս-թուրքական աքցանից խուսափելու համար Վրաստանը փորձում է առավել սերտացնել իր հարաբերությունները ԵՄ-ի և ՆԱՏՕ-ի հետ: Իր հերթին ԱՄՆ-ն հասկանում է, որ Հայաստանի հետ տեղի ունեցած ռուս-թուրքական սցենարը կարող է կրկնվել նաև Վրաստանում, և Հարավային Կովկասում իր միակ դաշնակիցը վտանգի մեջ է հայտնվել: ԱՄՆ-ի կողմից Վրաստանի դերի շեշտադրումը հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորման հարցում, գերիներին Վրաստանի տարածքով Հայաստան բերելը ցույց են տալիս, որ ԱՄՆ-ն ցանկություն ունի Ռուսաստանին դուրս մղելու տարածաշրջանից հարավկովկասյան երեք երկրների հաշտեցման միջոցով:

Ամփոփելով Թուրքիայի աշխարհաքաղաքական նկրտումների քննությունը՝ արձանագրենք, որ պաշտոնական Անկարան փորձում է միջազգային ասպարեզում օգտվել, այսպես կոչված, «պղպջակի էֆեկտից»։ **դրա էությունն այն է, որ տվյալ պետությունը, քաղաքականապես և տնտեսապես չունենալով բավարար հզորություն, առավել ևս**

չլինելով գերտերություն, արհեստականորեն մեծացնում է իր դերը միջազգային ասպարեզում՝ փորձելով շահաբաժիններ կորզել իր ռազմավարական դիրքից ու տարբեր տարածաշրջաններում միաժամանակյա ռազմական ներկայությունից: Պանթուրքիզմի և նեոսամսիզմի գաղափարներով տարված և ակնհայտ բարբարոսի դեր ստանձնած Էրդողանը ցանկություն է հայտնում զորք ուղարկելու երկրագնդի ցանկացած վայր՝ Պաղեստինից մինչև Աֆղանստան, քանի որ, ստեղծելով անկայունության օջախներ, փորձում է ստիպել մեծ տերություններին հաշվի նստել իր հետ և գիշումների գնալ իր համար կարևոր հարցերում: Հաշվի առնելով համավարակի հետևանքով ստեղծված տնտեսական լուրջ խնդիրները, գերտերությունների ցանկությունը՝ չներգրավվելու ակտիվ ռազմական հակամարտություններում, վախը ահաբեկչության և փախստականների հարցում՝ Թուրքիան օգտագործում է շանտաժի քաղաքականությունը՝ իր նպատակներին հասնելու համար: Դրա վերջին վկայությունը ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 5 մշտական անդամների վետոյի իրավունքի վրա հիմնվող միջազգային անվտանգության ողջ համակարգի ուղղությամբ Էրդողանի նետած քարն էր, որը կարող է նաև բումերանգի վերածվել:

Սակայն գերտերություն դառնալու իր հավակնությունների համար Թուրքիան նաև թանկ գին է վճարում. թուրքական լիրան 2020 և 2021 թթ. մի քանի անգամ գրանցել է անկման պատմական ռեկորդներ, ինչին նպաստել է ԱՄԷ-ի գլխավորությամբ մի քանի երկրների հաստատած էմբարգոն թուրքական ապրանքների նկատմամբ: Բացի այդ, շեղվելով արևմտյան գծից, Անկարան կորցրել է ավանդական ներդրողներին, որոնց շնորհիվ Էրդողանի իշխանության առաջին տարիներին հնարավոր դարձավ Թուրքիայի տնտեսական վերելքը: Արտասահմանյան մի շարք ազդեցիկ ընկերություններ փակել են Թուրքիայում իրենց ներկայացուցչությունները՝ հազարավոր մարդկանց դարձնելով գործազուրկ և թուրքական տնտեսությունը զրկելով միլիոնավոր դուլարների եկամուտից: Մյուս կողմից՝ ոչ ռացիոնալ է ՆԱՏՕ-ի անդամ երկրների հետ հարաբերությունների վատթարացումը՝ հաշվի առնելով այն փաստը, որ Թուրքիայի համար 10 ամենամեծ արտահանման երկրներից 8-ը ՆԱՏՕ-ի անդամ են: Միջերկրական ծովում Թուրքիայի գործողությունները հանգեցրել են պաշտպանական զենքերի գնման հարցում Կիպրոսի նկատմամբ էմբարգոյի վերացմանը⁸: Իսկ ռուսական «S-400»-ի ձեռքբերման հետևանքով ԱՄՆ-ի և Թուրքիայի հակասությունները հանգեցնում են սպառազինության վաճառքի սահմանափակմանը և «F-35» համակարգից Թուրքիայի հեռացմանը: Ար-

8 Տե՛ս US Embassy in Cyprus, “US International Military Education and Training for the Republic of Cyprus”, July 8, 2020, <https://cy.usembassy.gov/us-imet-training-for-cyprus/> (մուտք՝ 19.11. 2021):

դեն իսկ դադարեցվել է թուրքական բայրաքթարների համար Կանադայից անհրաժեշտ մասերի ներմուծումը, իսկ ԱՄՆ-ի կողմից սանկցիաների երկրորդ փաթեթի կիրառումը ծանր հարված կլինի ոչ միայն այդ համակարգերի, այլև թուրքական ողջ ռազմարդյունաբերության համար:

5. Թուրքիայի ներքաղաքական դրության բարդացման միտումները

Թուրքիայի արտաքին քաղաքականության բովանդակության մեջ ազգայնականության տարրի ավելացումը սերտորեն կապված է ներքաղաքական կյանքում ազգայնականների հետ կոալիցիա կազմելու հետ, որը Էրդողանի հենարանն է երկրի ներսում⁹, ինչով պայմանավորված է նաև քրդական հարցի վերաբերյալ նրա ծայրահեղական դիրքորոշումը: 2016 թ. չհաջողված հեղաշրջումից հետո Էրդողանի կախումն ազգայնականներից ավելի մեծացավ: Նրանք սկսեցին օգնել Էրդողանին շեղելու հասարակության ուշադրությունը ներքին խնդիրներից, տնտեսական ճգնաժամից, որն ավելի խորացավ համավարակի հետևանքով: Ընդհանուր առմամբ Էրդողանի իշխանությունն ունի յուրահատուկ բնույթ, քանզի հենարանի առումով այն շատ բևեռացված է. բնակչության գրեթե կեսը դեմ է նրա իշխանությանը, մյուս մասը, որ հիմնականում կազմում են գյուղացիությունը և ցածր եկամուտ ունեցողները, աջակցում է նրան: Սակայն մի բան ակնհայտ է՝ վերջին շրջանում մի շարք կարևոր քաղաքներում, այդ թվում՝ Ստամբուլում, նա կորցրեց վերահսկողությունը, չնայած որ անգամ ընտրությունները չեղարկելով էր փորձում փրկել իր դիրքերը¹⁰:

Նորից վերսկսվել են գյուղեկանների ձերբակալությունները, տասն-յակ հազարավոր մարդիկ 2016 թվականից հետո հայտնվել են բանտերում կամ մնացել առանց աշխատանքի՝ ուսուցիչներ, գեներալներ, մտավորականներ, ձնշվում է ազատ մամուլը, ձերբակալվում են քրդամետ ընդդիմադիր կուսակցության ղեկավարները¹¹: Այս ամենը վկայում է, որ Էրդողանն այդքան էլ վստահ չէ իր ուժերին: Ավելին՝ վերջերս Բոլթոնի և Բուշի եղբոր մասնակցությամբ ստեղծված «Թուրքական ժողովրդավարության նախագիծ» արդեն հստակ ազդակ է Էրդողանի համար, թե ինչպիսի վերաբերմունք ունի ԱՄՆ վարչակազմն իր նկատմամբ: Երկրի ներսում մեծ է ահաբեկչությունների վտանգը՝ հաշվի առնելով սիրիացի վարձկաններին իր տարածքով Լեռնային Ղարաբաղ և այլ երկրներ գործուղելու փաստը: Բացի այդ՝ քրդական

9 Տե՛ս Yasmeeen Serhan, The end of the Secular Republic, August 13, 2020:

<https://www.theatlantic.com/international/archive/2020/08/modi-erdogan-religious-nationalism/615052/>(մուտք 20.11.2021):

10 Տե՛ս Hoffman Max, Turkeys President Erdogan is Losing Ground at Home, Center for American Progress, August 24, 2020:

11 Տե՛ս Department of State, "Turkey", Country Reports on Human Rights Practices for 2019:

հարցը գնալով ավելի զգալի է դառնում՝ հաշվի առնելով այն, որ Բայդենի վարչակազմի օրոք ԱՄՆ-ն նորից սկսեց քրդերին դիտարկել որպես իսլամական պետության դեմ պայքարում դաշնակիցներ: Իսկ քրդերի զինույնը և հատկապես որևէ կարգավիճակով Սիրիայում քրդական միավորի ստեղծումը Թուրքիայի համար կարող են կործանարար հետևանքներ ունենալ:

Էրդողանը վերջին տարիներին կորցրել է նաև իր համախոհներից և թիմի կարևոր անդամներից շատերին, մասնավորապես՝ Գյուլին և արտաքին գործերի նախկին նախարար Դավութօղլուն: Վերջինս դարձել է նրա սուր քննադատը: Նա կրկին արևմտյան ուղղության որդեգրման կողմնակից է, մեղադրում է Էրդողանին Պուտինի հետ Թուրքիայի շահերի հաշվին իրականացվող բիզնեսի մեջ, կողմնակից է ժամանակին ԱՄՆ-ի սկսած «ֆուտբոլային դիվանագիտությանը» և Հարավային Կովկասից Ռուսաստանի հեռացմանը կովկասյան պետություններին հաշտեցնելու միջոցով:

Այսօր Թուրքիան կանգնած է իր աշխարհաքաղաքական կողմնորոշումը հստակեցնելու խնդրի առաջ: Անկարան, փաստորեն, թշնամական հարաբերությունների մեջ է ՆԱՏՕ-ի անդամ իր դաշնակիցների հետ, որոնց շուրթերով հնչում են նույնիսկ հակաթուրքական կոալիցիա ստեղծելու կոչեր: Թուրքիան նեոսուննիզմի գաղափարներ դավանող երկիր է և մի շարք տարածաշրջաններում ներգրավված է ռազմական հակամարտություններում, ակնհայտ հետընթաց է ապրում ժողովրդավարության ճանապարհից, և նույնիսկ Բայդենը Էրդողանին բռնապետ է անվանում, իսկ տնտեսական վիճակը օր օրի ավելի է վատթարանում: Թերևս շուտով մենք կդառնանք Թուրքիայի կողմից իր համար բարդ և ճակատագրական որոշումների կայացման ակնատեսը, քանի որ միջազգային հանրության հետ շանտաժի լեզվով խոսելու և շահաբաժիններ կորզելու ժամանակը սպառվում է:

6. Հնարավոր է արդյոք հակաթուրքական դաշինքի ձևավորումը

Այսպիսով՝ Ռ. Էրդողանի հետևողական ու համառ քայլերի հետևանքով Թուրքիան հայտնվել է ներքաղաքական, արտաքին քաղաքական, տնտեսական և անգամ քաղաքակրթական այնպիսի բարդ ու խճճված փակուղիների մեջ, որոնցից դուրս գալու համար շուտով նրա հրաժարականն անգամ բավարար պայման չի լինելու: Բայց ողջ խնդիրն այն է, որ Թուրքիայի նախագահը մտադիր է ամեն ինչ անել 2023 թ. լրացող Թուրքիայի Հանրապետության 100-ամյակը իշխանության ղեկին դիմավորելու համար: Իսկ սա նշանակում է, որ Էրդողանը շարունակելու է իր ակտիվ ու ագրեսիվ արտաքին քաղաքականության միջոցով ներքաղաքական ու

տնտեսական ձախողումներից առաջ եկող դժգոհություններն իրենց հիմքում խեղդելու քաղաքականությունը:

Դատելով ամենից՝ Էրդողանի նման համառ արկածախնդրությունը որոշակիորեն հունավորվում է նաև արևմտյան որոշ ուժերի կողմից, որոնք իր նախկին աշխարհաքաղաքական գործառույթը կորցրած Թուրքիան դիտարկում են իբրև մի քանի խաղաղաշտերում ծավալվող դիմակայությունների խորացման գործիք և անգամ այդ նպատակի համար գոհաբերվող խաղաքար: Բավարար հզորություն չունեցող Թուրքիայի կողմից «պղպջակի էֆեկտից» օգտվելու փորձերը կառավարելի դարձնելու համար նրանք մտադիր են ամուր փակել իրենց դարպասները Արևելյան Միջերկրածովքում ու Հունաստանի ծովեզերքում և միաժամանակ Էրդողանին հրել դեպի Ուկրաինա, Իրան, արաբական աշխարհ ու Աֆրիկա: Ուստի նրանք այժմ մի կողմից ամրապնդում են իրենց պաշտպանական դաշինքը Հունաստանի հետ և խրախուսում վերջինիս ջանքերով Արևելյան Միջերկրածովքում արդեն ուրվագծվող հակաթուրքական դաշինքի ձևավորման գործընթացը, մյուս կողմից՝ քաջալերում են Էրդողանի մեծապետական հովերն ու նրան ուղղորդում դեպի Ղրիմ, Դոնբաս և Կենտրոնական Ասիա: **Այս՝ սեպը սեպով հանելու քաղաքականությունը Հիտլերի խաղաղեցման արևմտյան հին ու միաժամանակ նոր մարտավարությունն է: Ուստի վերջերս Էրդողանին ներվեցին անգամ առաջատար արևմտյան երկրների դեսպաններին արտաքսելու սպառնալիքները:**

Պատճառն ակնհայտ է. Էրդողանի ստանձնած արևելյան Հիտլերի գործառույթը ուղղակի սպառնալիք է ոչ թե Արևմուտքի, այլ Հայաստանի, Իրանի, Ռուսաստանի, իսկ ապագայում՝ Չինաստանի համար, որոնց տարածքներում բնակվող թյուրքալեզու ժողովուրդները (Ղրիմի թաթարները, Իրանի ազերիները և Չինաստանի ույղուրները) որոշակի սպասելիքներ ունեն Թուրքիայից: Անշուշտ, Թուրքիայից որոշակի ակնկալիքներ ունեն նաև Կիպրոսի թուրքերն ու բալկանյան երկրների մահմեդականները, որոնց շրջանում ևս սկիզբ են առել խուլ խմորումներ: Նույն իրավիճակն է նաև Ռուսաստանի հարավային որոշ երկրամասերում ու Հյուսիսային Կովկասում: Ուրեմն Էրդողանի հիտլերացման առաջադրանքը միավորում է արևմտյան այն շրջանակներին, որոնց մեզանում ընդունված է անվանել «սորոսականներ»: Իզուր չէ, որ նրա գլխավոր ընդդիմախոս Դավութօղլուն վերջերս անթաքույց կերպով ակնարկում էր նախագահականում բուն դրած «սորոսականների» մասին:

Այս առաջադրանքի մասին տեղյակ են նաև Ռուսաստանում, սակայն նրա ներկայիս քաղաքական վերնախավին ձեռնտու է Թուրքիայի առաջխաղացումը բոլոր այն կետերում, որոնք կարող են զբաղեցվել Արևմուտքի կողմից: Շագրենի կաշվի նման ձգվող Թուրքիան իր ներկայիս հզորության պայմաններում նրանց համար վտանգ չի ներկայացնում, քանի դեռ

չի հատել որոշակի կարմիր գծեր: Ուստի արևելյան Հիտլերի խաղաղեցման քաղաքականությունից կշահի այն կողմը, որը ճիշտ կօգտագործի ժամանակի գործոնը՝ էրդողանին իր հակառակորդի կողմը հրելու և միաժամանակ՝ նրան հակազդելու ավելի ռացիոնալ բանաձև մշակելու միջոցով:

Գատելով ԱՄՆ-ի երկու բարձրաստիճան պաշտոնյաների՝ Վ. Նուլանդի և Ու. Բրոնսի մոսկովյան խորհրդավոր այցերից ու դրանց զուգահեռ՝ Թուրքիային դեպի Ուկրաինա ու Կենտրոնական Ասիա հրելու համառ փորձերից և, իհարկե, Սիրիայում քրդերին զինելու մեծամասշտաբ քայլերից՝ Արևմուտքն խլում է նախաձեռնությունը՝ Վ. Պուտինին կանգնեցնելով առանց Արևմուտքի՝ անլուծելի խնդիրների առջև: Ուստի Հայաստանն ու Արցախը Չեխոսլովակիա դարձրած՝ ռուս-թուրքական Սյունիսենը գլոբալ հարթությունում արդեն տապալված է, իսկ կողմերի հակաարևմտյան գործարքի դաշտը խիստ նեղացել է: Փոխարենը մեծացել է Արևմուտքի հետ սիրախաղերում «երրորդն ավելորդ է» սկզբունքով միմյանց դեմ գործարքի գնալու հավանականությունը, ինչը **տեսականորեն** կարող է հանգեցնել անգամ ԱՄՆ-ի ու Ռուսաստանի հակաթուրքական դաշինքի ձևավորմանը, եթե մինչ այդ **գործնականում** էրդողանն՝ ինքը չգլխավորի Ուկրաինայում ՆԱՏՕ-ի ռազմարշավը:

Ակնհայտ է, որ Թուրքիային ՆԱՏՕ-ից դուրս քաշելու և հակաամերիկյան քաղաքականության մեջ ներգրավելու՝ Ռուսաստանի նախագահի երազանքը չի իրականացել: Այսօր Թուրքիան արդեն հավասարը հավասարի պես է խոսում Ռուսաստանի հետ՝ Սիրիայում, Ուկրաինայում և Կենտրոնական Ասիայում բացահայտորեն հակադրվելով Մոսկվային: Բայդենի վարչակազմի՝ կրկնակի զսպման քաղաքականության ծավալման պայմաններում Ուկրաինայի հարցում միայնակ մնալու հեռանկարը ստիպում է Ռուսաստանին Հարավային Կովկասում համագործակցության եզրեր փնտրելու Ֆրանսիայի հետ, ինչն իր հերթին մեծացնում է Թուրքիայի ագրեսիվությունը՝ Ուկրաինայում: Այսպիսով, ԱՄՆ-ն հնարավորություն է ստացել «համատեղ ուժերով» զսպելու Ռուսաստանին՝ Ուկրաինայում, Թուրքիային՝ Հարավային Կովկասում, միևնույն ժամանակ՝ այդ ամենի դիմաց իր պայմանները թելադրելով և՛ Մոսկվային և՛ Անկարային:

Լիլիթ Վ. Գալլարյան – գիտական հետաքրքրությունների շրջանակում են միջազգային հարաբերություններում էթնիկ հակամարտությունների դերակատարության հիմնահարցը, դրա ազդեցությունը գերտերությունների քաղաքականության վրա, ինչպես նաև միջազգային խոշոր դերակատարների մրցակցությունը էթնիկ հակամարտությունների գոտիներում: Հեղինակ է 2 գիտական հոդվածի:

Էլ. հասցե՝ dallakyanlilit90@gmail.com

TURKEY'S GEOPOLITICAL AMBITIONS (ASPIRATIONS)

And the prospects of forming an anti-Turkish alliance

Lilit V. Dallakyan

Key words – Turkey, transformations, “bubble effect”, Eastern Mediterranean, Syria, Libyan civil war, South Caucasus, internal political crisis, Eastern Hitler function, anti-Turkish alliance.

In recent years, trying to rediscover its role in the international arena, Turkey expanded its influence in the Mediterranean basin, the Middle East and the South Caucasus, using military, political and economic instruments. However, such persistent and retrospective efforts led to the emergence of new obstacles and barriers to Turkish progress, the accumulation of which over time can lead to the formation of an anti-Turkish alliance.

Turkey is trying to use the so-called “bubble effect” in the international arena. That is, that state, not having enough power politically and economically, especially without being a superpower, artificially increases its role in the international arena, trying to extort dividends from its strategic position and simultaneous military presence in different regions. Obsessed with the ideas of Pan-Turkism and neo-Ottomanism, Erdogan is ready to send troops to any part of the world, because by creating zones of instability, he tries to force the great powers to take him into account and to make concessions on important issues for him. Taking into account the serious economic problems as the consequences of the epidemic, the desire of the superpowers not to get involved in an active military conflicts, the fear of terrorism and refugees issues, Turkey uses the policy of blackmail to achieve its goals. Turkey has already created zones of instability in a number of regions; he is waging a geopolitical struggle against the countries in the same military alliance with him. They can be divided into three main directions: the Mediterranean Sea, the Middle East and the South Caucasus. At the same time, it should be noted that these issues are interrelated.

The increase of the element of nationalism in the content of Turkey's foreign policy is closely connected with the circumstances of the coalition with the nationalists in the domestic political life. As a result, the country's economic situation is deteriorating day by day, so the time to extort dividends by speaking in the language of blackmail with the international community is running out. Meanwhile, Erdogan has

plunged Turkey into such complicated deadlocks in domestic politics, foreign policy, economy and even in civilizational issues, that his resignation will not be a sufficient condition for coming out of them soon. But the whole problem is that the Turkish president has intention to do everything to stay in power by the time of the celebration of the 100th anniversary of the Republic of Turkey in 2023.

In all likelihood, a stubborn adventure of Erdogan is somewhat fueled by certain Western powers, which, losing their former geopolitical function, see Turkey as a tool to deepen confrontations on several playing fields and even a playing card sacrificed for that purpose.

Therefore, on the one hand, they are now strengthening their defense alliance with Greece, encouraging the formation of an anti-Turkish alliance already underway in the Eastern Mediterranean, on the other hand, provoke Erdogan's majestic winds and directing him to Crimea, Ukraine and especially Central Asia. This wedge removal policy is the old and also new methodology of Hitler's pacification, in the role of which Erdogan is forgiven for threatening to expel the ambassadors of the leading Western countries. As the role of the Eastern Hitler assumed by Erdogan is not a direct threat to the West, but to Armenia, Iran, Russia, and in the prospect for China, at some point, the formation of an anti-Turkish alliance may unite the parties of the global confrontation, especially the interests of Russia and the USA, as the Russian-Turkish Munich, which made Armenia and Artsakh a new Czechoslovakia, has already failed on a global level. Russia and Turkey have no longer territories to concede to each other, so the field of their possible anti-western deal has been severely narrowed. Instead, the likelihood of a deal with the West based on the third is superfluous principle against each other increased, which could lead to the formation of a broad anti-Turkish collaboration based on a combination of US and Russian interests.

Резюме

ГЕОПОЛИТИЧЕСКИЕ АМБИЦИИ ТУРЦИИ

И перспективы формирования антитурецкого альянса

Лилит В. Даллакян

Ключевые слова – Турция, трансформации, «эффект пузыря», Восточное Средиземноморье, Сирия, гражданская война в Ливии, Южный Кавказ, внутривосточный кризис, функция Восточного Гитлера, антитурецкий альянс.

В последние годы Турция расширила свое влияние в Средиземноморском бассейне, на Ближнем Востоке и на Южном Кавказе, используя военные,

политические и экономические рычаги. Однако это привело к появлению новых препятствий и преград на пути успехов Турции, что со временем может привести к формированию антитурецкого альянса.

Турция пытается использовать так называемый «эффект пузыря» на международной арене. То есть это государство, не обладая достаточной политической и экономической мощью, тем более не являясь сверхдержавой, искусственно усиливает свое значение на международной арене, пытаясь извлечь дивиденды из своего стратегического положения и военного присутствия одновременно в разных регионах. Одержимый идеями пантюркизма и неоосманизма, Эрдоган готов отправить войска в любую точку мира, тем самым создавая зоны нестабильности. Таким образом он пытается заставить великие державы учитывать свою значимость на международной арене, для того, чтобы они делали уступки по важным для него вопросам. Принимая во внимание серьезные экономические проблемы такие, как последствия эпидемии, стремление сверхдержав не ввязываться в активные военные конфликты, страх перед терроризмом и проблемой беженцев, Турция все же использует политику шантажа для достижения своих целей.

Турция уже создала зоны нестабильности в ряде регионов и ведет геополитическую борьбу против стран, находящихся в одном с ней военном союзе. Турция действует по трем основным направлениям: Средиземное море, Ближний Восток и Южный Кавказ. При этом следует отметить, что эти направления взаимосвязаны.

Усиление элемента национализма во внешней политике Турции тесно связано с наличием ее коалиции с националистами во внутривнутриполитической жизни. В результате, экономическая ситуация в стране ухудшается день ото дня. Поэтому время «вымогать» дивиденды, говоря языком шантажа с международным сообществом, уходит. Между тем, Эрдоган поставил Турцию в такие сложные условия во внутренней и внешней политике, экономике и даже в цивилизационных вопросах, что даже его отставка не будет достаточным условием для выхода Турции из этого состояния в ближайшее время. Но проблема заключается в том, что президент Турции намерен сделать все, чтобы остаться у власти во время празднования 100-летия Республики Турция в 2023 г.

По всей видимости, упорный авантюризм Эрдогана в определенной степени подогревается некоторыми западными державами, которые, теряя свою прежнюю геополитическую роль, рассматривают Турцию как инструмент для углубления конфронтации на нескольких игровых площадках и даже как игральную карту, приносимую в жертву для этой цели.

Поэтому, с одной стороны, западные державы сейчас укрепляют свой оборонительный союз с Грецией, поощряя усиление антитурецкого альянса, уже

сформированного в Восточном Средиземноморье, с другой стороны, провоцируют великодержавные амбиции Эрдогана, направляя его на Крым, в Украину и в Среднюю Азию. Эта традиционная политика вышибания клина клином, и в тоже время методика умиротворения нового Гитлера, в роли которого Эрдогану прощают угрозу изгнания послов ведущих западных стран. Поскольку роль Восточного Гитлера, которую взял на себя Эрдоган, представляет собой прямую угрозу не Западу, а Армении, Ирану, России и в перспективе Китаю, в какой-то момент антитурецкий альянс может объединить стороны глобального противостояния, особенно учитывая при этом интересы России и США, поскольку российско-турецкий Мюнхен, превративший Армению и Арцах в новую Чехословакию, уже потерпел неудачу на глобальном уровне. У России и Турции больше нет территорий, которые можно было бы уступать друг другу, поэтому поле их возможной антизападной сделки сильно сузилось. Вместо этого вероятность сделки с Западом на основе принципа «третий лишний» друг против друга возрастает, что может привести к формированию широкого антитурецкого сотрудничества, основанного на сочетании интересов США и России, если **практически** Турция не сделает то же самое на Украине.